

Գողերու աւակնկալ պատիժ մը .

Շատ ատեն մը չէ որ Բարիզու մօտ արքունական ճամբուն մէջ երկու բախտախնդիրք , իրիկուան գէմ հանդիպեցան բեռնակիր կառքի մը որ տակառիկներ կը տանէր և մոմչորով ծածկուած էր՝ ՚ի նշան զգուշութեան մէջի եղածներուն : Ասկէ գուշակեցին անոնք որ կառքին մէջի եղած նորաձև տակառներուն մէջ անշուշտ արծաթ պիտի ըլլայ , ուստի յուսալով որ գիրուկ որս մը ձեռք ձգեն , այս հնարքը բանեցուցին :

Կառավարը կառքը պանգոկի մը զիմաց քաշած , անփորձ պատանի մը պահապան դրեր և ինքը ներս մտեր էր ընթրիք ընելու . գողերն վարպետութեամբ մը սղան հոնկէ հեռացուցին ծխախոտ գնելու խաւրելով , և ծառայութեան վարձ ձեռքը քանի մը փող գնելով : Իսկ իրենք շուտ մը երկու տակառ վերցնելով ծառատանկի մը ետև քաշուեցան որ բանան : Թէպէտ տակառներուն թեթևութիւնն և վրայի շնչառութեան համար թողուած ծակախոր իրենց յոյսը կէս մը տարակուսի մէջ ձգեցին , սակայն անոնք շուտ մը տակառներուն տակերը բանալով ձեռքերնին ներս խոթեցին . մէկէն մեղուի ամպ մը տակառներէն դուրս սփռուեցաւ , և բարկութեամբ մը դիմելով ասոնց վրայ անխնայ կը խայթէին երեսներն և մանաւանդ աչքերնին :

Անտանելի ցաւերով և գրեթէ կուրցած՝ չկրցան ալ իրենք զիրենք զսպել , սկսան պոռալ կանչել , որով շատ մը մարդիկ թափեցան : Մեծ գժուարութեամբ հազիւ հազ կրցան զասոնք այն կատաղի միջատներուն խայթուածքէն ազատել , և մէկէն պանդուկ մը տարին . ուսկից հարկ եղաւ որ հիւանդանոց տանին և զատատանական իշխանութեան ձեռք յանձնեն : Երկուքին ալ երեսը չարաչար ուռած էր . մէկուն նաև մէկ աչքն ալ կուրցեր է :

Յաղագս երկոտասան ամսոց տալուցն , քէ յիշուաքանչիւր ամիս ի՞նչ է պարտ գործ ածել :

Պարտ է զինչ որ վայտ կայ՝ որ դը կտրել կամենայ , ՚ի գեկտեմբերի 25 աւուրն ՚ի վեր մինչև ՚ի յունուար ամսոյ ելն՝ կտրել , ՚ի փուլն՝<sup>1</sup> որ լուսնի լոյս չկենայ . զի լոյսն լուսնկային ահովէ<sup>2</sup> կտրած փայտին , և ճճի ընծայէ ՚ի փայտն , և շուտ տայ փաւել :

Յաղագս յոսնուար ամսոց գործ ածելն . զոր արժան է զամենայն ազգ իւրաց յօտել , զայգոյ և զծառոյ . ՚ի յունուարի ութ օրն սկսնուլ մինչև տերևն երկնայ այգւոյն . և տես որ զքո յօտելն ՚ի յայդին՝ երբ յօրէն երկու պահ<sup>3</sup> ելեալ լինի սկսիր , մինչ յիննէրորդ պահն աւուրն իջնէ՝ բանէ , և այլ մի յօտեր մինչև ՚ի մէկալ օրն . և պատրաստ լեր<sup>4</sup> որ ՚ի յօրն որ գժնդակ հողմն լինի՝ չի յօտես . թէ ոչ՝ զամենն աւերի . այլ ընտրէ զյօտելոյ աւուրքն պարզ և ջեր , և առանց ցրտաբեր հողմոյ . և զյօտոցն սուր արտ որ չաւերէ զտունկն : Եւ զտնկելն ՚ի յունուարի 12 աւուրն ՚ի վեր արա մինչև ճանչես զտեղին , որ այլ տունկ չընդունի ՚ի զօրութենէ . և այն աւուրն ՚ի վեր աղբիլն է պարտ զծառքն , մինչ ՚ի մարտ ամսոյ 15 օրն . և պարտ է պատրուսելոյ տեղեստանն<sup>5</sup> յունուարի 12 աւուրն ՚ի վեր առնել . ևս առաւել զայն ազգ ծառքն՝ որ կանուխ լինի ծաղկել :

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

1 Լուսնի նուազման ատեն :  
2 Վնասէ :  
3 Երկու ժամ յետ արևուն ծագման :  
4 Զգուշացիր :  
5 Պատուաստելոյ տեղն ծառոց վրայ :